

2016թ. առաջին եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ
ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 518 հարկ վճարողների ամփոփ
ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված
են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2016թ.-ի ընթացքում
սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների
համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 518 հարկ վճարողների 2016
և 2015 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2016թ. առաջին եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա
կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 880.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն
եռամսյակի համեմատությամբ աճել է 1 %-ով:
2. Ներմուծման ծավալները կազմել են 145.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն
եռամսյակի 226.9 մլրդ դրամի փոխարեն:
3. Արտահանման ծավալները կազմել են 121.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա
նույն եռամսյակի համեմատ 11.3% -ով ավելի:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի առաջին
եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 30.2 մլրդ.
դրամ, որի 70%-ը կազմել է ԱԱՀ-ը:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի
առումով 2016թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից
վճարվել է շուրջ 96 մլրդ դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների
կողմից 2016թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է հանրապետությունում
հավաքագրված հարկային եկամուտների 54.4 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են թվով 153 հարկային ստուգումներ,
այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի
կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման
ճշտության 44 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե
լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1 մլրդ դրամի չափով:

7. 01.04.2016թ-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 131.1 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 91.8 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 14.9 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 8.6 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 2.5 մլրդ դրամի չափով:
8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 150714 մարդ, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը կազմել է 215 հազար դրամ, նախորդ տարվա 209 հազար դրամի փոխարեն: